

ՔՆՆԵՎԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՅՆԵՆԹՈՍՈՒԹԻՒՆ

Լեօ. «Գրիգոր Արծրունցի», III հատոր:

Մենք, հայերս, չենք ճանաչում ոչ միայն մեր երկիրն ու ժողովուրդը իր առանձնայատուկ պայմաններով, այլ և մեր անցեալը: Հեռու չգնանք և վերցնենք 1878—1884 թուականները, երբ ծագեց և որոշ ուղղութիւն ստացաւ հայկական հարցը թիւրքիայում: Գրիգոր Արծրունու և նրա «Մշակի» կատարած դերը այդ հարցում բաւական աղօտ է մեր հասարակութեան գիտակցութեան մէջ: Լէօի լոյս ընծայած այս հատորում կարելի է առատ նիւթ և որոշ տեսակէտներով լուսաբանութիւններ գտնել մեզ հետաքրքրող հարցի մասին: Այժմ իհարկէ դժուար չէ համոզուել որ Արծրունին այն ժամանակ աւելի տեսականօրէն մտածող մի իդէօլոգ էր, քան իրական, բարդ պայմանները կշռող մի քաղաքագէտ:

Գուցէ մեր մտաւոր զարդացման անխուսափելի աստիճանն էր այդպէս պահանջում և Արծրունու հետ մեր նոր սերունդը հաւատացած էր որ թիւրքահայի վերածնութիւնը կարող է իրագործուել նոյն ճանապարհով, որ տարաւ սլաւօն և յոյն ազգերը դէպի գոյութեան նոր պայմաններ: Իբրև կենդանի և զգայուն հրապարակախօս Գ. Արծրունին չգիտէր այնպիսի դիւթական լեզու բանեցնել որ մարդ շուարած մնար և չհասկանար թէ ինչպէս բացատրել նրա ասածները. նա կտրուկ և բուռն կերպով արտայայտում էր այն միտքն և այն զգացմունքը, որ այս կամ այն երևոյթի առիթով ծագում էր նրա մէջ: Ժամանակագրական կարգով հետևելով նրա խոհերին և յոյզերին մենք կարող ենք այսպէս ասած՝ նորից ապրել նոյն կեանքով, որ անցած գնացած է, մենք կարող ենք փորձերով այժմ լրջացած աւելի սառնասիրտ լսել նոր գաղափարների անձուէր քարոզչի և հայի յետամնացութիւնը մտրակող հրապարակախօսի տաք և համարձակ խօսքերը, քննել լաւատեսութեամբ ներշնչուած նրա վերանորոգչական ծրագրները: Անշուշտ այժմ դեռևս դժուար է անաչառապէս վերգնահատել Գ. Արծրունու ամբողջ գործու-

նէութիւնը, սակայն անուրանալի է նրա ահագին հեղինակութիւնը իր ժամանակակիցների վրայ և կատարած գերը մեր նոր կեանքի հոսանքների մէջ:

Աւելորդ է ասել որ հրատարակութիւնը գեղեցիկ է և մեծ խնամքով կատարուած, մի բան որ յատուկ է պ, Լէօի լոյս ընծայած բոլոր գրքերին:

Մ. Սմբատ Գարիբեդեան՝ «Հայկական ձգնաժամն եւ վերածնունդն», Պոսթոն, 1905 թ., գինն է թղթակազմ՝ 50 սէնթ. լաթակազմ, 75 սէնթ:

Ներկայ երկասիրութեանս նպատակն է վերլուծել մեր ազգային վերջին փորձառութիւններն և նշանակել անոնցմէ բղխող կենսական դասերը», ասուած է գրքի առաջաբանում: Հայերիս վերջին 25 տարիների կեանքը շատ աւելի հարուստ էր ցնորքներով և խելագարօրէն խիզախ ճիգերով, քան մեր առանձնայատուկ պայմանների գիտակցութեամբ և մեր ոյժերի նպատակայարմար գործադրութեամբ: Այժմ, կարծես, սկսել ենք աւելի լուրջ և քննադատաբար վերաբերուել մեր կացութեան և անելիքին: Գարբիէլեանի գրքի մանաւանդ քննադատական մասը արժանի է իւրաքանչիւր ոչ նախապաշարուած և խորհող հայի առանձին ուշադրութեան: Պակաս համոզիչ են նրա գրքի վերջին գլուխները, որոնց մէջ փորձուած է «գործունութեան մեթոդ» և «ազգային նկարագիրներ» պարզելու:

Ա.-յո՝ «Հայրենիքի կարօսը», 1905, Պետերբուրգ, 5 կոպէկ:

«Հայրենիքի կարօսը» թրքահայ գաղթականների կեանքից քաղուած մի պատկեր է, որի ոչ նիւթն է նոր և ոչ էլ գոյները:

Ձուլումից փախած գաղթական Մուրադը վճուում է մուրալ հիւանդութիւնից հարկադրուած: Պատահում է սովորականը—վիրաւորում են Մուրադին. «Անբեմաներ... լսկեց «դախլի» ետևից մի խուպոտ ձայն: Այդ բառը խայթեց Մուրադի սիրտը: Գրդի սրի խայթոցը աւելի տանելի էր, քան այդ բառը:»

Ու Մուրադը՝ իրան հասցրած վիրաւորանքից սաստիկ վրդովուած՝ ընկնում է անկողին. երազում նրա առաջ պատկերանում է հայրենի գիւղը, նախկին խաղաղ ու երջանիկ կեանքը, ապա, քրդերի ձեռքով յանկարծ հայրենի օջախի քար ու քանդ լինումը: Արթնանալով՝ նա գտնում է իր գլխի վերև